ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԱՊՁԲ-20-7/32-3

ք. Երևան «09» 06 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ Գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ազատյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.1.9 Ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 142,767,480 (հարյուր քառասուներկու միլիոն յոթ հարյուր վաթսունյոթ հազար չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

---

[20] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է _12_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ Թիկունքի վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Զ.Սարկավագի 157
«Արարատբանկբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510023294810100
ՀՎՀՀ 00803554
տնօրեն

Ա. ԱԶԱՏՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-7/32-3 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնման առարկայի		
հ/հ	անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	բաճկոն/Բաճկոն ձմեռային	**Բաճկոն ձմեռային (հատ)** Արտադրվում է բաց դեղնականաչավուն երանգի <<Ռիպստոպ>> տեսակի, 225 գրամ մակերեսային խտությամբ, 50% նեյլոնե և 50% բամբակյա բաղադրությամբ գործվածքից: Հետծալվող օձիքով: Բաճկոնի առաջամասը և թիկունքամասը մշակված է 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնե տաք ներդիրով, իսկ թևքերը 100 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնե տաք ներդիրով: Աստառացուն՝ ոչ պակաս քան 110 գրամ մակերեսային խտությամբ պաշտպանական երանգի սինթետիկ գործվածքից: Թիկունքը վերին կտրվածքով, կոկետկայով: Բաճկոնի փեշերի ներքին եզրերը մշակված են 1,5-1,8 սմ լայնության զարդակարով: Կոճկվում է կենտրոնական դեղնականաչավուն գույնի պլաստմասե շղթայական կոճկվածքով մինչև կրծքամասի գրպանների կափույրի ներքին եզրը, շղթայի վրայից երկայնակի 6սմ լայնությամբ փակ կափույրով, որը կայծակ շղթաի վրայից կոճկվում է 4 հատ 2,5x3,5 սմ չափսի կպչուն ժապավենով և 1 հատ 15 մմ տրամագծով կոճակով, ընդ որում վերին կոճկվող ժապավենը մշակված է կրծքամասի կափույրի վրա, իսկ կոճակ օղակը օձիքի միացման հատվածում: Բաճկոնի գոտկատեղում մշակվում է փակ տեսակի կարգավորվող դեղնականաչավուն գույնի էլաստիկ քուղ՝ նույն գույնի պլաստմասե կարգավորիչներով: Առաջամասում կրծքամասի վրա ձախ և աջ մասերում մշակված են կափույրներով, վրադիր ծավալուն 14,5սմ լայնության և 17 սմ երկարության մեկական գրպաններ, որոնց 5,5 սմ լայնության կափույրները կրծքամասի երկարությամբ ամբողջական են, կողերից փակ, կոճկվում են 2,5x2,5 սմ չափսի կպչուն ժապավեններով: Փեշերի ձախ և աջ մասերում մշակված են վերին մասերը դեպի ներս թեքված ներկարված, 18-18,5 սմ բացվածքով գրպաններ, որոնք կոճկվում են դեղնականաչավուն երանգի պլաստմասե կայծակ շղթայով: Բաճկոնի ներսից ձախ կրծքամասի հատվածում մշակված է ծոցագրպան: Կրծքամասի աջ և ձախ գրպանների կափույրների վրա մշակվում է կպչուն ժապավեն կրծքանշանների փակցման համար: Ուսադիրների շրջանում մշակվում են երեք փակօղակներ և երկու կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Թևքերի բազուկային մասը մշակված են կպչուն ժապավենով: կամ Թևքերի ներքին եզրերը մշակված են 5սմ լայնությամբ մանժետով, որոնց դիմային հատվածում մշակված են կպչուն ժապավենով 2,5x9սմ չափսերի կարգավորող պատաներ, իսկ մանժետի հետնամասը մշակված է գաղտնի էլաստիկ ժապավենով: Թևքերի վրա ուսակարից 9 սմ ներքև մշակված են 18-19 սմ երկարության և 12-12,5 սմ լայնության վրադիր երկայնակի գրպաններ, որոնք կոճկվում են կողքից դեղնականաչավուն երանգի պլաստմասե գաղտնի կայծակ շղթայով: Ձախ թևքի վրա մշակվում է սեպաձև տեսքով 8x10,5սմ չափսի, իսկ աջ թևքի վրա մշակվում է 7,5-8սմ տրամագծով պաշտպանական գույնի կպչուն ժապավեններ: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու համար: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը, պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Փաթեթավորումը՝ - եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ մինչև 5 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: **Ծանոթություն՝** 1. Չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ: 2. Ներկայացված նմուշները պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատվում կամ մերժվում է ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում: 3. Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը՝ 2%:
2	բաճկոն և տաբատ	**Բաճկոն և տաբատ (լրակազմ)** Համազգեստը բաղկացած է բաճկոնից և տաբատից: Արտադրվում է բաց դեղնականաչավուն երանգի <<Ռիպստոպ>> տեսակի, 225 գրամ մակերեսային խտությամբ, 50% նեյլոնե և 50% բամբակյա բաղադրությամբ գործվածքից: **Բաճկոնը** միալանջ, թիկունքամասը ծավալուն: Կոճկվում է կենտրոնական շղթայական կոճկվածքով, շղթայի վրայից երկայնակի 5,5 սմ լայնության փակ կափույրով, որը կայծակ շղթաի վրայից կոճկվում է 3 ուղղանկյունաձև 2,5X4,5 սմ չափսի կպչուն ժապավեններով: Ուսադիրների շրջանում մշակվում են երեք փակօղակներ և երկու կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Բաճկոնի առաջամասում ամբողջ երկայնքով մշակվում է ոչ պակաս 110 գրամ մակերեսային խտությամբ պաշտպանական երանգի սինթետիկ գործվածքից աստառացու: Բաճկոնի օձիքը ծալովի, օձիքի անկյունային եզրերը կլորավուն: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Առաջամասում կրծքամասի վրա ձախ և աջ մասերում մշակված են կափույրներով, վրադիր ծավալուն 14,5 սմ լայնության և 17սմ երկարության երկու գրպաններ, որոնց 5,5 սմ լայնության կափույրները կրծքամասի երկարությամբ ամբողջական են, կողերից փակ, կոճկվում են 2,5x2,5 սմ չափսի կպչուն ժապավեններով, իսկ գրպանների կողերը դեպի կենտրոնական շղթա ներկարված են

		դեղնականաչավուն երանգի պլաստմասե կայծակ շղթայով: Փեշերի ձախ և աջ մասերում մշակված են վերին մասերը դեպի ներս թեքված ներկարված, 18-18,5 սմ բացվածքով գրպաններ, որոնք կոճկվում են դեղնականաչավուն երանգի պլաստմասե կայծակ շղթայով: Բաճկոնի ներսից ձախ կրծքամասի հատվածում մշակված է ծոցագրպան: Բաճկոնի կողամասերում մշակված են երկու կոճակով կարգավորվող պատաներ: Կրծքամասի աջ և ձախ գրպանների կափույրների վրա մշակվում է 2,5x12,5 սմ չափսի կպչուն ժապավեն կրծքանշանների փակցման համար: Թևքերի վրա ուսակարից 9 սմ ներքև մշակված են 18-19 սմ երկարության և 12-12,5 սմ լայնության վրադիր երկայնակի գրպաններ, որոնք կոճկվում են կողքից դեղնականաչավուն երանգի պլաստմասե գաղտնի կայծակ շղթայով: Ձախ թևքի վրա մշակվում է սեպաձև տեսքով 8x10,5սմ չափսի, իսկ աջ թևքի վրա մշակվում է 7,5-8սմ տրամագծով պաշտպանական գույնի կպչուն ժապավեններ: Ձախ թևքի վրա, թևքի գրպանին զուգահեռ, բազկակալից 6 սմ վերև մշակվում է 7,0 սմ լայնության և 13 սմ երկարության գրպանիկ՝ նախատեսված երեք հատ գրիչների կրման համար: Թևքերի ներքևի եզրերը կոճկվում են կպչուն ժապավենով: **Տաբատը** - Ազատթող տաբատը բաղկացած է առաջամասից, հետևամասից և գոտուց: Առաջամասը կողային գրպաններով: Աջ հետնամասում կտրված գրպան՝ կափույրով: Գուլֆիկը մշակվում է դեղնականաչավուն երանգի պլաստմասե կայծակ շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին 3,5 սմ լայնությամբ, վրան մշակված են 8 հատ 4,5 սմ երկարության կամրջակներ: Կողային կարերում անցկացվում են 1,5-2 մմ լայնության կարմիր գույնի գործվածքից երիզներ: Առաջամասում, մինչև ծնկները մշակվում է՝ դեղնականաչավուն գույնի գործվածքից աստառ: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու համար: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը, պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Փաթեթավորումը՝ - եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մինչև 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: **Ծանոթություն՝** 1. Չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ: 2. Ներկայացված նմուշները պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատվում կամ մերժվում է ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում: 3. Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը՝ 2%:
3	բաճկոն և տաբատ /Բաճկոն և տաբատ /կարճաթև/	**Բաճկոն և տաբատ՝** կարճաթև (**լրակազմ**) Համազգեստը բաղկացած է բաճկոնից և տաբատից: Արտադրվում է բաց դեղնականաչավուն երանգի <<Ռիպստոպ>> տեսակի, 225 գրամ մակերեսային խտությամբ, 50% նեյլոնե և 50% բամբակյա բաղադրությամբ գործվածքից: **Բաճկոնը** միալանջ, թիկունքամասը ծավալուն: Կոճկվում է կենտրոնական շղթայական կոճկվածքով, շղթայի վրայից երկայնակի 5,5 սմ լայնության փակ կափույրով, որը կայծակ շղթաի վրայից կոճկվում է 3 ուղղանկյունաձև 2,5X4,5 սմ չափսի կպչուն ժապավեններով: Ուսադիրների շրջանում մշակվում են երեք փակօղակներ և երկու կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Բաճկոնի առաջամասում ամբողջ երկայնքով մշակվում է ոչ պակաս քան 110 գրամ մակերեսային խտությամբ պաշտպանական երանգի սինթետիկ գործվածքից աստառացու: Բաճկոնի օձիքը ծալովի, օձիքի անկյունային եզրերը կլորավուն: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Առաջամասում կրծքամասի վրա ձախ և աջ մասերում մշակված են կափույրներով, վրադիր ծավալուն 14,5սմ լայնության և 17սմ երկարության երկու գրպաններ, որոնց 5,5 սմ լայնության կափույրները կրծքամասի երկարությամբ ամբողջական են, կողերից փակ, կոճկվում են 2,5x2,5 սմ չափսի կպչուն ժապավեններով, իսկ գրպանների կողերը դեպի կենտրոնական շղթա ներկարված են դեղնականաչավուն երանգի պլաստմասե կայծակ շղթայով: Փեշերի ձախ և աջ մասերում մշակված են վերին մասերը դեպի ներս թեքված ներկարված, 18-18,5 սմ բացվածքով գրպաններ, որոնք կոճկվում են դեղնականաչավուն երանգի պլաստմասե կայծակ շղթայով: Բաճկոնի ներսից ձախ կրծքամասի հատվածում մշակված է ծոցագրպան: Բաճկոնի կողամասերում մշակված են երկու կոճակով կարգավորվող պատաներ: Կրծքամասի աջ և ձախ գրպանների կափույրների վրա մշակվում է 2,5x12,5 սմ չափսի կպչուն ժապավեն կրծքանշանների փակցման համար: Բաճկոնի թևքերը կարճաթև՝ ներքին եզրերը մշակված 2սմ լայնության մանժետով: Թևքերի վրա ուսակարից 9 սմ ներքև ձախ թևքի վրա մշակվում է սեպաձև տեսքով 8x10,5սմ չափսի, իսկ աջ թևքի վրա մշակվում է 7,5-8սմ տրամագծով պաշտպանական գույնի կպչուն ժապավեններ: **Տաբատը** - Ազատթող տաբատը բաղկացած է առաջամասից, հետևամասից և գոտուց: Առաջամասը կողային գրպաններով: Աջ հետնամասում կտրված գրպան՝ կափույրով: Գուլֆիկը մշակվում է դեղնականաչավուն երանգի պլաստմասե կայծակ շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին 3,5 սմ լայնությամբ, վրան մշակված են 8 հատ 4,5 սմ երկարության կամրջակներ: Կողային կարերում անցկացվում են 1,5-2 մմ լայնության կարմիր գույնի գործվածքից երիզներ:

<table>
<tr>
<td></td>
<td></td>
<td>Առաջամասում, մինչև ծնկները մշակվում է՝ դեղնականաչավուն գույնի գործվածքից աստառ:
Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու համար:
Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը, պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:
Փաթեթավորումը՝ - եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մինչև 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը:
Ծանոթություն՝
1. Չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:
2. Ներկայացված նմուշները պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատվում կամ մերժվում է ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում:
3. Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը՝ 2%:</td>
</tr>
<tr>
<td>4</td>
<td>Բաճկոն և կիսաշրջազգեստ</td>
<td>Բաճկոն և կիսաշրջազգեստ (լրակազմ) Համազգեստը բաղկացած է բաճկոնից և տաբատից:
Արտադրվում է բաց դեղնականաչավուն երանգի <<Ռիպստոպ>> տեսակի, 225 գրամ մակերեսային խտությամբ, 50% նեյլոնե և 50% բամբակյա բաղադրությամբ գործվածքից:
Բաճկոնը միալանջ, թիկունքամասը ծավալուն: Կոճկվում է աջից ծախ կենտրոնական շղթայական կոճկվածքով, շղթայի վրայից երկայնակի 5,5 սմ լայնության փակ կափույրով, որը կայծակ շղթայի վրայից կոճկվում է 3 ուղղանկյունաձև 2,5x4,5 սմ չափսի կպչուն ժապավեններով: Ուսադիրների շրջանում մշակվում են երեք փակօղակներ և երկու կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Բաճկոնի առաջամասում ամբողջ երկայնքով մշակվում է ոչ պակաս քան 110 գրամ մակերեսային խտությամբ պաշտպանական երանգի սինթետիկ գործվածքից աստառացու:
Բաճկոնի օձիքը ծալովի, օձիքի անկյունային եզրերը կլորավուն: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Առաջամասում կրծքամասի վրա ձախ և աջ մասերում մշակված են կափույրներով, վրադիր ծավալուն 14,5սմ լայնության և 17սմ երկարության երկու գրպաններ, որոնց 5,5 սմ լայնության կափույրները կրծքամասի երկարությամբ ամբողջական են, կողերից փակ, կոճկվում են 2,5x2,5 սմ չափսի կպչուն ժապավեններով, իսկ գրպանների կողերը դեպի
կենտրոնական շղթա ներկարված են դեղնականաչավուն երանգի
պլաստմասե կայծակ շղթայով: Փեշերի ձախ և աջ մասերում մշակված են վերին մասերը դեպի ներս թեքված ներկարված, 18-18,5 սմ բացվածքով գրպաններ, որոնք կոճկվում են դեղնականաչավուն երանգի պլաստմասե կայծակ շղթայով: Բաճկոնի ներսից ձախ կրծքամասի հատվածում մշակված է ծոցագրպան:
Բաճկոնի կողամասերում մշակված են երկու կոճակով կարգավորվող պատաներ: Կրծքամասի աջ և ձախ գրպանների կափույրների վրա մշակվում է 2,5x12,5 սմ չափսի կպչուն ժապավեն կրծքանշանների փակցման համար:
Թևքերի վրա ուսակարից 9 սմ ներքև մշակված են 18-19 սմ երկարության և 12-12,5 սմ լայնության վրադիր երկայնակի գրպաններ, որոնք կոճկվում են կողքից դեղնականաչավուն երանգի պլաստմասե գաղտնի կայծակ շղթայով: Ձախ թևքի վրա մշակվում է սեպաձև տեսքով 8x10,5սմ չափսի, իսկ աջ թևքի վրա մշակվում է 7,5-8սմ տրամագծով պաշտպանական գույնի կպչուն ժապավեններ: Ձախ թևքի վրա, թևքի գրպանին զուգահեռ, բազկակալից 6 սմ վերև մշակվում է 7,0 սմ լայնության և 13 սմ երկարության գրպանիկ՝ նախատեսված երեք հատ գրիչների կրման համար: Թևքերի ներքևի եզրերը կոճկվում են կպչուն ժապավենով:
Կիսաշրջազգեստը կազմված է առաջամասից, հետևամասից և ներկարված գոտուց: Հետևամասի ներքևում 15-17 սմ բացվածքով, կապված հասակի հետ, հետևից վերնամասը՝ դեղնականաչավուն երանգի պլաստմասե կայծակ շղթայով կոճկվող, որը գոտու վրա կոճկվում է մեկ կոճակօղակով, ներսի կողմից մինչև բացվածքը մշակված է դեղնականաչավուն գույնի գործվածքից աստառ:
Կիսաշրջազգեստի երկարությունը գոտու հետ միասին, ըստ հասակների՝
<table>
<tr><td rowspan="2">Հասակ /սմ/</td><td>150-155</td><td>156-162</td><td>163-169</td><td>170-176</td></tr>
<tr><td>1</td><td>2</td><td>3</td><td>4</td></tr>
<tr><td>Երկարություն /սմ/</td><td>48</td><td>51</td><td>54</td><td>57</td></tr>
</table>
Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու համար:
Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը, պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:
Փաթեթավորումը՝ - եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մինչև 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը:
Ծանոթություն՝
1. Չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:</td>
</tr>
</table>

<table>
<tr><td></td><td></td><td>2. Ներկայացված նմուշները պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատվում կամ մերժվում է ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում:
3. Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը՝ 2%:</td></tr>
<tr><td>5</td><td>բաճկոն և կիսաշրջազգեստ/ /կարճաթև/</td><td>Բաճկոն և կիսաշրջազգեստ՝ կարճաթև (լրակազմ) Համազգեստը բաղկացած է բաճկոնից և տաբատից: Արտադրվում է բաց դեղնականաչավուն երանգի <<Ռիպստոպ>> տեսակի, 225 գրամ մակերեսային խտությամբ, 50% նեյլոնե և 50% բամբակյա բաղադրությամբ գործվածքից:
Բաճկոնը միալանջ, թիկունքամասը ծավալուն: Կոճկվում է աջից ծախ կենտրոնական շղթայական կոճկվածքով, շղթայի վրայից երկայնակի 5,5 սմ լայնության փակ կափույրով, որը կայծակ շղթայի վրայից կոճկվում է 3 ուղղանկյունաձև 2,5x4,5 սմ չափսի կպչուն ժապավեններով: Ուսադիրների շրջանում մշակվում են երեք փակօղակներ և երկու կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Բաճկոնի առաջամասում ամբողջ երկայնքով մշակվում է ոչ պակաս քան 110 գրամ մակերեսային խտությամբ պաշտպանական երանգի սինթետիկ գործվածքից աստառացու:
Բաճկոնի օձիքը ծալովի, օձիքի անկյունային եզրերը կլորավուն: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Առաջամասում կրծքամասի վրա ձախ և աջ մասերում մշակված են կափույրներով, վրադիր ծավալուն 14,5սմ լայնության և 17սմ երկարության երկու գրպաններ, որոնց 5,5 սմ լայնության կափույրները կրծքամասի երկարությամբ ամբողջական են, կողերից փակ, կոճկվում են 2,5X2,5 սմ չափսի կպչուն ժապավեններով, իսկ գրպանների կողերը դեպի կենտրոնական շղթա ներկարված են դեղնականաչավուն երանգի պլաստմասե կայծակ շղթայով: Փեշերի ձախ և աջ մասերում մշակված են վերին մասերը դեպի ներս թեքված ներկարված, 18-18,5 սմ բացվածքով գրպաններ, որոնք կոճկվում են դեղնականաչավուն երանգի պլաստմասե կայծակ շղթայով: Բաճկոնի ներսից ձախ կրծքամասի հատվածում մշակված է ծոցագրպան:
Բաճկոնի կողամասերում մշակված են երկու կոճակով կարգավորվող պատաներ: Կրծքամասի աջ և ձախ գրպանների կափույրների վրա մշակվում է 2,5x12,5 սմ չափսի կպչուն ժապավեն կրծքանշանների փակցման համար:
Բաճկոնի թևքերը կարճաթև՝ ներքին եզրերը մշակված 2սմ լայնության մանժետով:
Թևքերի վրա ուսակարից 9 սմ ներքև ձախ թևքի վրա մշակվում է սեպաձև տեսքով 8x10,5սմ չափսի, իսկ աջ թևքի վրա մշակվում է 7,5-8սմ տրամագծով պաշտպանական գույնի կպչուն ժապավեններ:
Կիսաշրջազգեստը կազմված է առաջամասից, հետևամասից և ներկարված գոտուց: Հետևամասի ներքևում 15-17 սմ բացվածքով, կապված հասակի հետ, հետևից վերնամասը՝ դեղնականաչավուն երանգի պլաստմասե կայծակ շղթայով կոճկվող, որը գոտու վրա կոճկվում է մեկ կոճակօղակով, ներսի կողմից մինչև բացվածքը մշակված է դեղնականաչավուն գույնի գործվածքից աստառ:
Կիսաշրջազգեստի երկարությունը գոտու հետ միասին, ըստ հասակների՝
<table><tr><td rowspan="2">Հասակ /սմ/</td><td>150-155</td><td>156-162</td><td>163-169</td><td>170-176</td></tr><tr><td>1</td><td>2</td><td>3</td><td>4</td></tr><tr><td>Երկարությունն /սմ/</td><td>48</td><td>51</td><td>54</td><td>57</td></tr></table>
Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու համար:
Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը, պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:
Փաթեթավորումը՝ - եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մինչև 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը:
Ծանոթություն՝
1. Չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:
2. Ներկայացված նմուշները պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատվում կամ մերժվում է ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում:
3. Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը՝ 2%:</td></tr>
<tr><td>6</td><td>պոլո շապիկներ/Շապիկ կարճաթև /գրասենյակային/</td><td>Շապիկ բամբակյա /հատ/ ГОСТ -26085-84, շապիկը արտադրվում է ուղիղ ձևածքով, կարճաթև, վզամասը մշակված է 2սմ լայնության տրիկոտաժե մանժետով՝ եզրագծված 4-5մմ լայնության կրկնակի զարդակարով: Գործվածքը դեղնականաչավուն երանգի տրիկոտաժ, բամբակյա /համաձայն ԳՕՍՏ-29298-2005/, մակերեսային խտությունը 150±2% գրամ:
Շապիկի մեջքամասի վերին եզրի կարի տակից կարվում է չափս-հասակի ստուգիչ պիտակ:
Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Թևքերի և փեշի եզրերը ներծալված 2սմ լայնքով և եզրագծված 4-5մմ լայնության կրկնակի զարդակարով:
Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:</td></tr>
</table>

		Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ մինչև 200 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Բոլոր պարամետրերի շեղումներն ըստ ԳՕՍՏ-ի: **Ծանոթություն՝** 1. Չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ: 2. Ներկայացված նմուշները պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատվում կամ մերժվում է ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի						
հ/հ	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	մատակարարումը 2020թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝
						3-րդ եռամսյակ
1.	բաճկոն/Բաճկոն ձմեռային	հատ	2,020	14,004	28,288,080	2,020
2.	բաճկոն և տաբատ	լ-կ	3,200	13,800	44,160,000	3,200
3.	բաճկոն և տաբատ/Բաճկոն և տաբատ /կարճաթև/	լ-կ	3,200	13,104	41,932,800	3,200
4.	Բաճկոն և կիսրջազգեստ	լ-կ	800	12,804	10,243,200	800
5.	բաճկոն և կիսաշրջազգեստ/ /կարճաթև/	լ-կ	800	12,534	10,027,200	800
6.	պոլո շապիկներ/Շապիկ կարճաթև /գրասենյակային/	հատ	4,050	2,004	8,116,200	4,050

Ծանոթություն՝ - մատակարարվող բոլոր ապրանքատեսակները պետք է լինեն նոր և չօգտագործված և պետք է հանձնվեն ՀՀ ՊՆ կենտրոնական իրային բազա՝ ՀՀ, ք. Երևան, Արցախի 61 մատակարար կազմակերպության միջոցով:

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-7/32-3 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Գնման առարկայի								
հ/հ	անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ., ընդ որում՝					
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1.	բաճկոն/Բաճկոն ձմեռային	18211500/1	28,288,080	28,288,080	28,288,080	28,288,080	28,288,080	28,288,080
2.	բաճկոն և տաբատ	18231910/6	44,160,000	44,160,000	44,160,000	44,160,000	44,160,000	44,160,000
3.	բաճկոն և տաբատ/Բաճկոն և տաբատ /կարճաթև/	18231910/7	41,932,800	41,932,800	41,932,800	41,932,800	41,932,800	41,932,800
4.	Բաճկոն և կիսրջազգեստ	18231920/2	10,243,200	10,243,200	10,243,200	10,243,200	10,243,200	10,243,200
5.	բաճկոն և կիսաշրջազգեստ/ /կարճաթև/	18231920/3	10,027,200	10,027,200	10,027,200	10,027,200	10,027,200	10,027,200
6.	պոլո շապիկներ/Շապիկ կարճաթև /գրասենյակային/	18331300/5	8,116,200	8,116,200	8,116,200	8,116,200	8,116,200	8,116,200

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Թանկարժեք կարի ֆաբրիկա» ՍՊԸ
տնօրեն

Ա. ԱՋԱՏՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-20-7/32-3 պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-20-7/32-3 պայմանագրի

ԱԿՏ N ____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը

(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:
ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն